

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ**

**ԴԱՇՏԱԴԵՄ ՀԱՄԱՅՆՔԻ
2016-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ**

**ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ
ԾՐԱԳԻՐ**

Մշակվել է՝ համայնքի ղեկավարին կից գործող ՀԶՇՕ –ի և տեղական բյուջեի կառավարման գծով խորհրդական մարմնի կողմից:

Ներկայացվել է՝ համայնքի ղեկավար Անդրանիկ Ավետիսյանի կողմից:

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 16 դեկտեմբերի 2016թ-ի թիվ 24 որոշում

1.1 Համայնքի ղեկավարի ողջույնի խոսքը

ՀՀ Արագածոտնի մարզի Դաշտադեն համայնքի 2016-2021 թթ զարգացման հնգամյա ծրագիրը / այսուհետ ՀԶՀԾ/ հիմք է ընդունվել 2015 թ-ի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ սահմանադրության 181-րդ հոդվածի, Տիմ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով և 201-րդ հոդվածի Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակվել է համայնքի զարգացման հնգամյա ծրագիր:

ՀԾՀԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով ներկայումս գործող Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքով սահմանված Տիմ-երի իրավասությունները, համայնքի ղեկավարի լիազորությունները նրա գործունեության բնագավառում:

ՀԶՀԾ-ն հինգ տարվա ընթացքում ընդգրկել է, հաշվի առնելով համայնքի ուժեղ և թույլ կողմերը, իր մեջ ներառելով առաջնահերթ և կենսական նշանակություն ունեցող հարցեր:

Գյուղատնտեսական ոլորտում – ռոտզման ներքին համակարգի վերանորոգում և վերակառուցում, չմշակվող հողատարածքներում հիմնել պտղատու այգիներ և նրանց ռոտզման համակարգ կաթիլային եղանակով ջրման: Ունենալ համայնքում կաթի ընդունման և վերամշակման արտադրամաս:

Կոմունալ սպասարկման ոլորտում ավելացնել գիշերային լուսավորության համակարգը ընդգրկելով այլ փողոցներ, աղբահանությունը կազմակերպել ավելի քաղաքակիրթ ձևով ունենալով աղբարկղեր և աղբահանման մեքենա մեկ միավոր:

Կրթության ոլորտում կատարել դպրոցի գազաֆիկացում, լոկալ ջեռուցում և 1-ին հարկի վերանորոգման և հարդարման աշխատանքներ:

Առողջապահության ոլորտում բուժկետի վերանորոգում և գույքի ձեռքբերում:

Տուրիզմի և զբոսաշրջության ոլորտում զարգացնել ընտանեկան տուրիզմը՝ էկոտուրիզմը:

Պատմամշակութային ոլորտում համայնքում առկա պատմամշակութային համալիրի պեղումներ և վերականգնման աշխատանքներ:

2. Համայնքի իրավիճակի նկարագրություն

2.1 Համայնքի ընդհանուր նկարագրություն

- աշխարհագրական դիրքը, ռելիեֆը

Դաշտադեմ գյուղը գտնվում է ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի Արտին լեռան հարավ – արևելյան ստորոտին, Թալին քաղաքից հարավ 4.0 կմ հեռավորության վրա: Ծովի մակերևույթից 1416 բարձրության վրա, իսկ վարչական տարածքի հարավային մասը իջնում է մինչև 1180 մ բարձրության վրա: Վարչական տարածքը կազմում է 3027.51 հա, որից 139.66 հա բնակավայր: Բնակավայրը գտնվում է նախալեռնային գոտում: Կլիմայական պայմանները չորային է, ձմեռն անցնում է քիչ ձյան տեղումներով, անձրևներ լինում են գարնան՝ մարտ- ապրիլ ամիսներին և խոր աշնանը: Լինում են հաճախակի ուժեղ քամիներ և ենթարկվում է հաճախակի կարկտահարման: Տարածքը գտնվում է համատարած տուֆ քարի շերտի վրա, որի հաստությունը կազմում է մոտ 35 մ, ինչը բերում է մեծ սեսմակայունության: Համայնքը իր վարչական տարածքով սահմանակից է 4 այլ համայնքների վարչական տարածքներին: Բնակավայրի միջով անցնում է նոր վերակառուցված M 9 Թուրքիայի սահման միջպետական ավտոմայրուղին:

- պատմական տեղեկատվություն

1979թ-ին Ներքին Թալին գյուղը վերանվանվել է Դաշտադեմ: Բնակիչների նախնիները եղել են 1915 թ-ի եղեռնից տեղահանված՝ Սուշից, Ալաշկերտից և Խնուսից: Բնակավայրից հարավ 2 կմ հեռավորության վրա գտնվում է պատմական Քաղենի քաղաքի, հիմնովին վերականգնված « Սուրբ Քրիստափոր » վանքը (VII դար): Վանքի և բնակավայրի միջև ընկած 2 կմ տարածքում պահպանվել են քաղաքի բնակելի տների հիմքերը և բնակավայրի հարավային եզրում պահպանվում է Կամսարական եղբայրների նստավայր՝ բերդ – ամրոց «Դաշտադեմի ամրոց» խոշոր համալիրը (VII-IX դար) պարփակված 4.6 հա և արտաքին պահպանման տարածքով 31.5 հա: Ամրոցի ներսում գործում է հիմնովին վերականգնված « Սուրբ Մարգիս » եկեղեցին XIII դար: Համայնքի ողջ տարածքում պահպանված են շատ խաչքարեր (IV, VII, IX դար) և խաչքար մահարձան (IX դար): որոշ քանակությամբ խաչքարեր: Այդ տարածքում է պահպանվում VII դարի պատմական կլոր – խաչքարը:

- բնակչություն

Բնակչության թիվ		1-18 տարիքային		18-63 տարիքային		63 և բարձր տարիքային		Մսուր Մանկապ. հաճախ. թիվը		Դպրոց հաշախ. թիվը	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
592	108	414	70	22	76						
ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.
309	283	63	45	220	194	26	44	12	10	40	36

Բարձրագույն ուս. հաստ. սովորողների թիվը	Թերի բարձրագույն և տեխ. ուս. սովորողների	Բարձրագույն կրթություն ունեցողների թիվը
---	--	---

		թիվը			
7		8		9	
20		3		53	
ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.
9	11	3	-	21	32

2.2 Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

- համայնքի ընդհանուր տարածքային բյուջեն – 15788.1 հազար դրամ
- ընդհանուր բյուջեյում սեփական եկամուտներ – 4711.6հազար դրամ 29.84%
- գյուղատնտեսություն

Համայնքի զբաղեցված վարչական ընդհանուր տարածքի բնութագիրը

Ընդհանուր վարչական տարածք	Արտավայր հա	Պտղատու այի հա	Վարելահող	Այլ հողատեսքեր հա	Բնակավայր հա	Արդյունաբերական	Էներգետիկայի,տրանսպորտի կոմունա նաահ հա	Պատանշակության պահպանման հողեր հա	Անտառային հողեր հա	Ջրային հողեր հա
3027.51	2196.0	9.0	321.69	69	136.66	18.96	18.3	35.69	210.78	11.15

Համայնքում կան միայն գյուղացիական տնտեսություններ,կոլեկտիվ գյուղացիական տնտեսություններչկան:Գյուղացիական տնտեսությունները զբաղված են անասնապահությամբ, հիմնականում խոշոր եղջերավոր 465 գլուխ,մանր եղջերավոր 1100 գլուխ և խոզեր 86 գլուխ:Գյուղատնտեսական մշակության արտադրանքը հիմնականում բազմամյա խոտաբույսեր,այգեգործություն ծիրան,խնձոր,բանջարաբոստանային կուլտուրաներ – ձմերուկ,լոլիկ, վարունգ:

Գյուղատնտեսական արտադրանքի ծավալները սպառման շուկան

- Անասնապահություն

Խոշոր եղջերավոր		Մանր եղջերավոր		Խոզեր
Միս կգ	Կաթ լիտր	Միս կգ	Պանիր տնային արտադրության կգ	Միս կգ

23000		60000		1200		6000		4000	
Մեփական կարիքներ	Ներքին շուկա	Մեփական կարիքներ	Ներքին շուկա	Մեփական կարիքներ	Ներքին շուկա	Մեփական կարիքներ	Ներքին շուկա	Մեփական կարիքներ	Ներքին շուկա
5000	18000	20000	40000	2000	10000	2000	4000	500	3500

Կոշտ կերերի, մրգերի և բանջարաբոստանային կուլտուրաների

Բազմամյա խոտաբույսեր տոննա		Աշնանացան և գարնանացան հացահատիկային կուլտուրաներ գարի-ցորեն տոննա		Պտղատու Ծիրան տոննա		Զմերուկ տոննա		Լոլիկ տոննա		Վարունգ տոննա	
800		44		100		300		50		50	
Մեփական կարիքների	Ներքին շուկա	Մեփական կարիքների	Ներքին շուկա	Մեփական կարիքների	Ներքին շուկա	Մեփական կարիքների	Ներքին շուկա	Մեփական կարիքների	Ներքին շուկա	Մեփական կարիքների	Ներքին շուկա
450	350	44	-	10	90	5	295	10	40	5	45

Պատմամշակութային հուշարձաններ և զբոսաշրջություն

- Համայնքի ուժեղ առկայություն: Մշակութային այս ժառանգությունը ստեղծում է մեծ պոտենցիալ զբոսաշրջության զարգացումը համայնքում:

- Դպրոցներ և նախադպրոցական հաստատություններ

Համայնքում գործում է մեկ միջնակարգ դպրոց: Դպրոցի մասնաշենքը 1976 թվականի տիպային կառույց է, նախատեսված հզորությունը 240 աշակերտի համար, ուսուցման մասնաշենքը երկհարկանի է և ունի կից սպորտի դահլիճ

մասնաշենք:2016-2017 ուս տարում աշակերտների թիվը հասնում է 70 աշակերտ,ուսուցիչների թիվը – 19,սպասարկող անձնակազմը – 6:

Համայնքում գործում է մսուր – մանկապարտեզ,1984 թվականի տիպային կառույց է,երկհարկանի իր հզորությամբ 140 երեխայի համար:Մանկապարտեզում գործում է մեկ խումբ – 20 երեխա,անձնակազմը – երկու դաստիարակ և երկու սպասարկող:

Առողջապահական հաստատություններ

Համայնքում առկա է 1990 թվականին կառուցված բուժ - կետ երկհարկանի մասնաշենքը:Տիպային հզորությունը երկու մահճակալ:Գործում է, ունի մեկ բուժքույր:

Անապահով ընտանիքներ

Ընտանեկան նպաստներ համակարգում գրանցված են 35 ընտանիք, որից 20 ընտանիք օգտվում է համակարգի նպաստից:

Գործազրկության մակարդակը

Համայնքի 414 աշխատաձեռքի առկայության մակարդակով 73 քաղաքացի ընդգրկված են աշխատանքի պետական, մասնավոր ձեռնակկություններում և գերատեսչություններում:

2.3 Համայնքում իրականացվող ծրագրեր

կողմերից մեկն է առկա 35.0 հա վրա պահպանվող պատմամշակութային մեծ համալիրը իր երկու եկեղեցիներով,-Կամսարական եղբայրների «Բերդ ամրոց»,բազմադարյան խաչքարերի

Համայնքում առաջնահերթ հրատապ կենսական և սոցիալական խնդիրների լուծումն այս 15 տարիների ընթացքում կարելի է ասել լուծված է: Համայնքում կառուցված է 100% - ով գազաֆիկացման աշխատանքներ երկու խոշոր ծրագրերով:Համայնքը սպասարկվում է նոր կառուցված խմելաջրի արտաքին և ներքին ցանցերի,օրվա կարգավորման ջրամբարի,համայնքային ծառայությամբ խմելաջրի 24 ժամյա սպասարկմամբ:Կենտրոնական փողոցների 40%-ը ունի զիշերային լուսավորվածություն:Համայնքի միջով անցնող M9 միջպետական ճանապարհը ,որը 2014 – 2015 թվականներին ամբողջովին վերակառուցվել է:

Գործում է ակումբ – գրադարան,սպորտային խմբակ,մսուր – մանկապարտեզ,բուժ – կետ,միջնակարգ դպրոց:

Համայնքը օգտվելով իր ուժեղ կողմերից, խնդիր է դնում այս հինգ տարիների ընթացքում լուծել առավել հրատապ պահանջ ունեցող հետևյալ ծրագրեր:

- Գյուղատնտեսական մթերքների արտադրություն և սպառում

Օգտվելով համայնքի բարենպաստ կլիմայական պայմաններից, վարելահողերի առկայությամբ, ինքնահոս ոռոգման ջրի առկայությամբ:

1-ին ծրագիր – 2017 – 18 թվականներին բարելավել և վերակառուցել ինքնահոս և պոմպի տակ գտնվող ոռոգման ջրի ներքին ցանցերի համակարգը: Դրանով պակասեցնել ոռոգման ջրի կորուստները: Ավելացնել շահառուներին ոռոգման ջրի սպասարկման քանակը:

2-րդ ծրագիր – 2017 – 18 – 19 թվականներին աջակցել գյուղացիական տնտեսություններին լքված, չմշակվող վարելահողերի վրա նորից հիմնել պտղատու այգիներ, հիմնականում ծիրան, խնձոր և խաղող: Ծրագիրը կյանքի կկոչվի, եթե գտնվեն գյուղատնտեսական վարկեր ցածր տոկոսադրույքով և երկարաժամկետ:

3-րդ ծրագիր – 2017 – 18 թվականներին նոր հիմնված պտղատու այգիների ոռոգումը բաց ցանցերով վերակառուցել կաթիլային եղանակի: Ֆինանսական աղբյուրներ վարկային գնով, գտնել շահագրգիռ կազմակերպություններ, որոնք զբաղվում են մրգերի գնմամբ և արտահանմամբ, որոնք կցանկանան ֆինանսավորել որոշ չափով ծրագրի իրականացումը, դիմացն ստանան համապատասխան միզի տեսականի:

4-րդ ծրագիր – 2017 – 18 թվականներին ստեղծել կաթի ընդունման և վերամշակման արտադրամաս: Համաֆինանսավորման աղբյուրներ գտնել «Վորլդ Վիժն» ՍԲԿ – ի կամ գտնել շահագրգիռ ներդրողներ:

5-րդ-ծրագիր - 2017 թվականին համայնքի համաֆինանսավորման և Մոսկվաբնակ Վահագ Զաքարյանի ֆինանսավորմամբ ավելացնել համայնքի գլխավոր փողոցների զիջերային լուսավորության ծրագիր մոտ 1200 մետր երկարությամբ:

6 –րդ ծրագիր – 2017 -18 թվականներին իրագործել, արդեն մարզային ծրագրերի շրջանակում ընդգրկված Դաշտադեմի միջնակարգ դպրոցի գազաֆիկացման, լոկալ

ջեռուցման կառուցման,ինչպես նաև I կորպուսի I հարկի հարդարման, վերանորոգման աշխատանքների ծրագիրը:Ֆինանսավորման աղբյուրներ՝ մարզային ծրագրեր և ՀՀ կառավարության ֆինանսավորմամբ:

7 – րդ ծրագիր – 2017 – 19 թվականներին իրագործել Դաշտադեմի մտուր – մանկապարտեզի վերանորոգման աշխատանքներ, ներքին հարդարում, ծածկի ազրոշիֆերների փոխարինումը թիթեղով:

Ֆինանսավորման աղբյուրներ – համատեղ ֆինանսավորում ծրագրին « Վորլդ Վիժն », այլ հասարակական կազմակերպությունների հետ և ներգրավել նաև մարզային ծրագրերը:

8 – ծրագիր – 2018 – 20 թվականներին իրականացնել « բուժկետ » երկու մահճակալանոց երկհարկանի շենքի վերանորոգման և վերակառուցման աշխատանքները: Ֆինանսական աղբյուրներ փնտրել,համաֆինանսավորմամբ, մարզային և պետական ծրագրերում:

- Տուրիզմի և զբոսաշրջության ոլորտում

9 – րդ ծրագիր – Տուրիզմի և զբոսաշրջության ոլորտի զարգացման ծրջանակներում նախատեսել, իրագործել 2017 – 20 թվականներին ընտանեկան տուրիզմ,ընտանեկա հյուրանոց ծրագրերի իրականացում:Ծրագրի ֆինանսավորման աղբյուրներ փնտրել մասնավոր ընտանիքներին ցածր դրույքաչափերով հատկացվող վարկեր,համագործակցել հայ – ֆրանսիական ապակենտրոնացված համագործակցության շրջանակում:

Պատմամշակութային ժառանգության ոլորտում

10 – րդ ծրագիր – 2017 – 21 թվականներին շարունակել « Դաշտադեմ բերդ – ամրոցի » պատմամշակութային համալիրի վերականգնման և պահպանման ծրագրի իրագործումը:Ֆինանսական աղբյուրները՝ շարունակել Հայաստանում ԱՄՆ – ի դեսպանատան աջակցությամբ համաֆինանսավորում քաղաքաշինության պետական կոմիտեի հետ,որը իր հերթին կաջակցի ընտանեկան տուրիզմ – հյուրանոց ծրագրի իրականացմանը:

Շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում

11 – ընթացիկ – 2017 – 21 թվականներին իրագործել ամբողջ համայնքում աղբահանության ծրագիրը: Ծրագրի խնդիրներն են ձեռք բերել աղբարկղեր և աղբահան ավտոմեքենա: Համաֆինանսավորման աղբյուրներ փնտրել հասարակական կազմակերպությունների հետ և հայ – ֆրանսիական ապակենտրոնացման համագործակցության շրջանակներում:

Քաղաքաշինության ոլորտի ծրագրում

12 – ընթացիկ – 2017 – 18 թվականներին իրագործել Դաշտաղեմի գերեզմանատան և « Քրիստափոր » վանք տանող ճանապարհի վերանորոգման աշխատանքներ: Ֆինանսավորման աղբյուրներ՝ գտնել բարերար և համաֆինանսավորումով իրագործել ծրագիրը:

2.4. Համայնքի ֆինանսական միջոցների

Գնահատում և կանխատեսում

Համայնքում կոնկրետ ծրագիր իրականացնելու համար կարևոր նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը:

Արագաճոտնի մարզի Դաշտաղեմի համայնքում այն ունի հետևյալ պատկերը:

հհ	Եկամուտի տեսակը	2016թ. փաստացի	2017թ. կանխատ	2018թ. կանխատ	2019թ կանխատ	2020թ. կանխատ	2021թ. կանխատ
1	Հողի հարկ	1330.0	1337.4	1337.4	1337.4	1337.4	1337.4
2	Գույքահարկ	1204.0	1418.2	1450.0	1470.0	1500.0	1550.0
3	Տեղական տուրքեր	20.0	30.0	40.0	50.0	60.0	80.0
4	Տեղական վճարներ	2.0	5.0	5.0	5.0	5.0	5.0
5	Հողի վարձակալության վճարներ	120.0	150.0	150.0	150.0	200.0	250.0
6	Այլ ոչ հարկային եկամուտներ	2020.0	2003.7	2020.0	2030.0	2050.0	2100.0
7	Գույքի օտարման մուտքեր	50.0	800.0	-	-	-	-

8	Ֆին.համահարդեցման դոտացիա	11076.5	11500.0	12000.0	12500.0	13000.0	14000.0
9	Տարեսկզբի մնացորդը	954.1	-	-	-	-	-
ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ		16746.6	17244.3	17002.4	17542.4	18152.4	17772.4

2.5.Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Համայնքի իրավիճակի բնութագրման և գնահատման ընդհանուր և ոլորտային հիմնական ցուցանիշները երկու տեսակի են՝ համայնքի սոցիալ – տնտեսական իրավիճակը (միջավայրը) բնութագրող (ոչ ֆինանսական) և ինանսական ցուցանիշներ:

Հիմնվելով համայնքում տիրող փաստացի իրավիճակի ուսումնասիրության, վերլուծության և գնահատման արդյունքների վրա՝ կարելի է արձանագրել համայնքում ներկայում առկա ընդհանուր և ոլորտային հիմնական հիմնախնդիրները: Դրանք են՝

- . համայնքը չունի գլխավոր հատակագիծ և քաղաքաշինական ծգրային այլ փաստաթղթեր,
- . համայնքը չունի ջրահեռացման կենտրոնացված համակարգ,
- . համայնքը չունի աղբատար մեքենա, աղբահանության և սանիտարական մաքրման ծաղայությունների մատուցման համար անհրաժեշտ տնտեսական բազա և ֆինանսական հնարավորություններ,
- . ներհամայնքային ճանապարհները և փողոցներն անբարեկարգ վիճակում են, բացակայում են որոշ փողոցների արտաքին (գիշերային) լուսավորության համակարգ,
- . տարածքները չեն բավականացնում համայնքում անասնապահության հետագա զարգացման համար,

. համայնքի բնակիչներն ունեն լուրջ խնդիրներ ու դժվարություններ՝ արտադրված գյուղատնտեսական մթերքներն իրացնելու, մինչև շուկա հասցնելու հարցում,

. համայնքի անկապարտեզը (նախակրթարանը) գործում է մասնակիորեն՝ չնայած համայնքում առկա է դրա՝ ընդլայնման և ամբողջական գործարկման պահանջարկը,

. մայնքի դպրոցի շենքը կարիք ունի ընթացիկ նորոգման, ներքին հարդարման և դուռ – պատուհանների փոխարինման, գազաֆիկացման և լոկալ ջեռուցման,

. համայնքի գյուղապետարանի, գրադարանի շենքերը չունեն ջեռուցման համակարգեր, որի պատճառով այդ հիմնարկները ձմռանը ստիպված են իրենց շենքերը տաքացնել վառելափայտի վառարանների միջոցով,

. համայնքից տարեցտարի արտագաղթն իր բացասական ազդեցությունն է թողնում համայն քի դպրոցի աշակերտների, մանկապարտեզի սաների թվերի վրա, որոնք վերջին տարիներին անընդհատ նվազում են՝ իր բոլոր բացասական հետևանքներով հանդերձ,

. համայնքի աշխատունակ բնակչության 414- ից մշտական աշխատանք ունեն 73-ը, այդ պատճառով հաճախ բնակիչների մի որոշակի մասը մեկնում է արտագնա աշխատանքի այլ երկրներ, մեկնողներից ոչ բոլորն են վերագառնում համայնք:

Համայնքի հիմնախնդիրների ցանկը կարելի է շակունակել, սակայն, ակնհարտ է որ հնգամյա ժամանակահատվածում անհնար է լուծում տալ համայնքում առկա բոլոր հիմնախնդիրներին:

Վերևում թվարկված հիմնախնդիրներից անհրաժեշտ է առանձնացնել նրանք, որոնց լուծումն, իրատեսականության տեսանկյունից, նպատակահարմար է ներառել համայնքի 2017-21թթ.

ՀԶԲԾ-ում՝ ելնելով համայնքի ռեսուրսային հնարավորություններից և համայնքի հետագա զարգացման՝ ՏԻՄ-երի ընտրած ռազմավարությունից և սահմանած հիմնական նպատակներից:

2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, նարավորությունների և սպառնալիքների (ՈԻԹՀՄ) վերլուծություն

Համայնքի ուժեղ կողմերը

- . Համայնքի աշխարհագրական դիրքը՝ միջպետական ավտոմայրուղու առկայությունը,
- . Գյուղում IV-VII դարերի պատմություն ունեցող երկու եկեղեցիների,
- . Դաշտադեմ ամրոցի ,բերդ-պարսպի,100-ից ավելի պատմական խաչքարերի առկայությունը, տուրիզմի զարգացման հնարավորությունը
- . Ոռոգման ներհամայնքային ցանցի առկայությունը
- . Վարելահողերի 40 %-ի ոռոգումը ինքնահոս եղանակով
- . Բարձրագույն կրթություն ունեցող մասնագետների առկայությունը
- . Բուժ ամբուլատորիան
- . Մսուր – մանկապարտեզ
- . Գործող մշակույթի տունը,պարի խմբով,արևելյան սպորտաձևի խմբակներով և համակարգչային համակարգով

Համայնքի թույլ կողմերը

- . Ազգաբնակչության ծանր սոցիալ – տնտեսական վիճակը
- . Համայնքի բնակչության թվաքանակի նվազումը, արտագաղթի վտանգը
- . Գործազրկության բարձր մակարդակը
- . Համայնքից չի գործում տրանսպորտ դեպի մայրաքաղաք, Գյումրիև Արմավիր
- . Ոռոգման ներքին ցանցի անմխիթար վիճակը
- . Փողոցների ամխիթար վիճակը
- . Վարկային ներդրումների հաշվին աջակցել գյուղմթերքների վերամշակմամբ զբաղվող մանր ձեռնարկությունների ձևավորմանը (կաթի և մսի արտադրության բնագավառում)

. Գտնել շահագրգիռ կազմակերպություններ, կապեր սփյուռքահայ համայնքներում՝ տեղում պատմական մեծ արժեք ունեցող ամրոցի, պարսպի, եկեղեցու, խաչքարերի պեղումները կազմակերպելու և վերանորոգելու համար, ստեղծելով հնարավորություն տուրիզմի զարգացման համար

. Վերանորոգել մշակույթի տուն – գրադարանի շենքը, այն կահավորել նոր գույքով

. ավարտել բուժկետի ներքին հարդարման աշխատանքները, ստեղծել երկու մահճակալանոց ծննդատուն

. Բարեկարգել ներհամայնքային ճանապարհներն ու փողոցները

3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

3.1. Համայնքի զարգացման տեսլական

Համայնքի տեսլականն է՝

Համայնքը դարձնել գյուղատնտեսական մթերքների արտադրության և վերամշակման տարածաշրջանային կենտրոն, բարեկարգ ու մաքուր, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող և զբոսաշրջության համար զրավիչ բնակավայր:

Համայնքի սահմանված տեսլականին հասնելու համար համայնքի ռազմավարությունն է՝

. համայնքում անասնապահության զարգացում և անասնապահական մթերքների արտադրության ծավալների աստիճանական մեծացում՝ անասնազլխաքանակի տարեցտարի ավելացման և անհրաժեշտ քանակությամբ անասնակերի ապահովման միջոցով,

. համայնքում կաթի, մսի հանձնման և վերամշակման արտադրամասի ստեղծում և գործարկում,

. տնային պայմաններում բնական հյութերի տադրության կազմակերպում և աստիճանական զարգացում,

. համայնքի սեփականություն համարվող ենթակառուցվածքների պահպանում, շահագործում, նորոգում և զարգացում,

. ներհամայնքային ճանապարհների և փողոցների նորոգում և բարեկարգում, արտաքին լուսավորության համակարգի անցկացում, ճանապարհային նշանների տեղադրում,

. համայնքի բնակչության սոցիալ – տնտեսական պայմանների բարելավում՝ նրանց մատուցվող հանրային ծառայությունների

(ջրամատակարարում և ջրահեռացում, գազամատակարարում, աղբահանություն և սանիտարական մաքրում, տրանսպորտ և կապ, նախադպրոցական և դպրոցական հանրակրթություն, մշակույթ և սպորտ, սոցիալական պաշտպանություն և այլն) շրջանակի աստիճանական ընդլայնման և որոշակի անշեղ բարձրացման միջոցով,

. տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության բարելավում՝ համայնքային կենտրոնի ստեղծման և մասնակցության ձևերի զարգացման միջոցով,

. համայնքում էկոտուրիզմի ենթակառուցվածքների ստեղծում և զարգացում՝ բուսաշրջիկների գիշերակացի տնային պայմանների ապահովման, հասարակական սննդի, առևտրի և սպասարկման օբյեկտների ստեղծման, համապատասխան ծառայությունների պատշաճ մակարդակով մատուցման միջոցով:

Նպատակներն են՝

. տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության ակտիվացում և բարելավում՝ համայնքի ենթակառուցվածքների ընդլայնման և զարգացման միջոցով,

. ներհամայնքային ճանապարհների և փողոցների վիճակի բարելավում և լուսավորում,

. համայնքում գյուղատնտեսության (հողագործության, անասնապահության, այգեգործության) զարգացում՝ տնամերձերի, վարելահողերի, խոտհարքների և արոտավայրերի նպատակային և արդյունավետ օգտագործման միջոցով.

. համայնքի նախադպրոցական կրթության և դաստիարակության պայմանների ընդլայնում (շենքային և գույքային, աշխատակարգի, երեխաների թվի ու ննդի առումներով),

. համայնքի բնակչության կենցաղային պայմանների բարելավում՝ առանձնատների գազաֆիկացման, խմելու և տնտեսական ջրի բամատակարարման ներհամայնքային համակարգերինորոգման և ընդլայնման, աղբահանության ծառայության կազմակերպման ճանապարհով,

. համայնքի դպրոցական հանրակրթության պայմանների բարելավում՝ միջնակարգ դպրոցի շենքի նորոգման, ներքին հարդարման, դռների և պատուհանների փոխարինման և ջեռուցման միջոցով,

. համայնքի բնակչությանը հանրային ծառայությունների մատուցում ամբողջ տարվա ընթացքում՝ համայնքային հիմնական ենթակառուցվածքների (գյուղապետարան , մանկապարտեզ, գրադարան, բուժկետ) շենքերի ջեռուցումն ապահովելու միջոցով: